

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՃԱՆՍՊԱՐԶՈՐԴՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆՈՒՄ:

IV.

Բ Ա Յ Ա Ձ Ե Տ.

Արդէն ժամի 7 1/2 էր, մի ճանապարհորդի համար բաւական ուշ, երբ միւս առաւօտը վերակազդուրուած արթնացի: Եւ քա-
րերարոյ հիւրընկալները թէյը պատրաստած ինչ էին սպասում
և շատ չանցած սենեակը գարձեալ լցուեց մարդկանցով, որոնք
ուզում էին լսել նորութիւններ: Յետոյ եկան շատ ուրիշ ան-
ձինք ևս, որոնք կարծում էին թէ ես բժիշկ եմ: Ինչպէս նը-
րանց կարծիքով իւրաքանչիւր եւրոպացի է և ցանկունում էին
բժշկուել իւրեանց ամեն տեսակ հիւանդութիւններից: Երբ նո-
ցա յայտնեցի, թէ չէ որ այնտեղ տաճիկ բժիշկ կայ, նոքա պա-
տասխանեցին, որ նա ոչինչ չէ հասկանում, մի պատասխան, որ
ես յաճախ էի լսել ռուսաց փոքր գաւառական քաղաքներում
թէ հայ և թէ ռուս հասարակ ժողովրդից իւրեանց բժիշկների
վերաբերմամբ: Ասելով որ քաղաքում տաճկական դեղատոռն կայ,
և մինչև անգամ հիւանդանոց էլ կայ, ուստի որպէս զի ազա-
տուեմ այդ ձանձրացուցիչ հասարակութիւնից, գրտեցի այլ և
այլ դեղերի դեղատոմսեր ի ներքուստ համազուած լինելով, որ
դեղաւաճաւը կամ անկարող կլինի իմ լատինական խզբզոցը
կարգող, կամ իւր մօտ չի ունենալ իմ նշանակած նիւթերը:

Եւ յետոյ ես առիթ ունեցայ համոզուելու, որ Բիթլիսի պէս քաղաքում (սա վալիուլթեան քաղաք է, ունի 25000-ից մինչև 30000 բնակիչ և բաւական թւով զօրք) պակասում են ամենատարրական դեղերը, երբ իմ բարեկամ մի բժշկից խնդրեցի վերք կապելու համար ինձ տալ կամ քիչ եօգօֆօրմ կամ կարբոլեան թթու, կամ սուլփիմատ, յայտնեց ինձ որ այդ անասկ դեղերից ունի միայն 5 գրամ եօգօֆօրմ և մենակ ինքն է ամբողջ քաղաքում, որ ունի այդպիսի արտասահմանեան նիւթեր:

Վերջապէս կարողացայ մի կերպ ազատուել ինձ ձանձրացնող յաճախորդներից և իմ ծառայի հետ գնացի քաղաքը տեսնելու, բայց դրա համար հարկաւոր չէր շատ ժամանակ: Բայազետը մի տեսակ միացուցիչ օղակ կազմելով Տրապիզոնի, Լըզրումի, Թաւրիզի և Թեհրանի պարսկա-տաճկական վաճառականութեան, միևնոյն կողմից էլ իւր մէջ ընդունելով Վանից Երևան և Ռուսաստան գնացող քարաւանները միշտ մեծ նշանակութիւն է ունեցել տիրապետողների աչքում: Այդ ապացուցանում են այն բազմաթիւ հին և ամենահին ամբողջեանց աւերակները, որոնք գտնւում են քաղաքի վերի մասում համարեա անմերձանալի տեղերի վրայ և կարծես կպած լինին ուղղահայեաց լեռների փեշերին: Բերդի կառավարիչը ինձ ասաց, որ այդ պարիսպների խիստ աչքի ընկնող, ամուր մասը շինուել է ջենուլացիների կողմից, բայց ես ժամանակ չունէի նրա ասածի ճշմարտութիւնը վերաւորուգելու: Նրա ասելով ամբողջ ամենաամուր մասերը շինել է տուել Բայազետի նախկին տոհմաբար իշխող փաշան անցեալ դարու վերջում, բայց կործանուել է մասամբ 1840 թ. Արարատի երկրաշարժով, մասամբ 1854-ի և 1878 պատերազմների ժամանակ: Մինչև օրս էլ ոչ այդ աւերուած մասերն են վերանորոգուած, ոչ էլ Զանգեզուրի կործանած աշտարակը:

Բայազետի փողոցները մեծ մասամբ զառիվայր են, ծուռ և այնքան նեղ, որ անհնար է կառքի գործածութիւնը, մինչև անգամ ձիաւորներն էլ են դժուարութեամբ քաղաքումը շարժուում: Տների մարդուս վրայ թողած տպաւորութիւնը բաւական լաւ է, թէև համեմատած քիչ առաջ նկարագրած ռուսական Իզդի-

րի տների հետ, մեծ տարբերութիւն կգանենք: Քաղաքի ծայրերում եղող մի քանի աննշան ծառատունկերը օգնում են մուսաւալու այն աննպաստ կարծիքը, որ ստանում է ճանապարհորդը իւր աչքի առաջ ունենալով շրջակայ, կանանչազուրկ լեռներից: Բազարը շատ փոքր է և ողորմելի, իւրաքանչիւր ուսական յետընկած գիւղի մէջ նա աւելի մեծ է և աւելի լաւ է կազմակերպուած. մինչև անգամ չգտայ մի մորակ գնելու, այն էլ այստեղ՝ ուսական սահմանի մօտ տեղում: Արիշ հետաքրքիր բան չկայ Բայազետում. տեսնելու արժանի է համարում մի փայտեայ, կիսակործան դղեակ, որը դարուս սկզբում շինել է տուել Մահմուդ փաշան և վերջին պատերազմի ժամանակ ծառայելով իբրև միջնաբերդ փառ յիշատակ է թողել մի քանի ուս զինուորների մէջ:

Այդ պատերազմի ժամանակ 1878 թ. Ապրիլի 30 ին ուսները գններալ Տէր-Ղուկասեանի առաջնորդութեամբ արշաւեցին բայազետի վրայ և հէնց առաջին յարձակմամբ առան քաղաքը և տիրապետեցին: Թէև այն պալատը, որ շինել էր Մահմուդ փաշան քաղաքի վերի մասում, 50 ոտ առաջ դուրս ընկած, ուղղահայեայ ժայռի վրայ, 1840 թ. երկրաշարժի շնորհիւ մասամբ կործանուել էր, բայց նրան շրջապատող ահաւելի շրջապարիսպները մեծաւ մասամբ անվնաս մնում էին և մինչև օրս էլ բաւական լաւ պահպանուած են: Նոքա 40-ից մինչև 80 ոտ փութկալի բարձրութիւն և մեծ հաստութիւն ունենալով կարող էին մի առ ժամանակ պաշտպանել նրա մէջ գտնուող բերդակալներին: Այդ պատճառով Տէր-Ղուկասեանը պալատը միջնաբերդ դարձրեց և այնտեղ թողնելով 150 կողակ ինքը իւր գնդով գէպի արեւմուտք ճանապարհորդեց Ղիադինի վրայով Էրզրումի գէմ: Ճանապարհին նրան հանդիպում են մի խումբ քրդեր, — տաճիկ սպաների ասելով սոցա թիւը 5000 է եղել, ուսների ասելով 10,000, — որոնք գէնք պահանջեցին, որպէս զի ուսների հետ միանալով կուռն իւրեանց ատելի տաճիկների գէմ: Ասկայն Տէր-Ղուկասեանը սյդ վայրենի հրոսակների առաջարկած դաշնադրութիւնը փառնգաւոր համարելով փորձեց զանազան խոստումներով

նոցա սպասել տալ և զէնք տալու ժամանակը յետաձգել: Մինչ-
 դեռ քուրդերը իւրեանց ասպագայում բռնելիք ընթացքի մասին
 խորհրդակցում էին իրար մէջ, վրայ հասաւ Մեհմեդ փաշան մի
 տաճկական գնդով և պատահած դէպքերի մասին դեռ ոչինչ
 չիմանալով, հէնց սկզբից իւր հաւատակիցներին ողջունեց իբրեւ
 դաշնակիցների, զէնք տուեց նոցա և այդպիսով դուրսնացաւ իւր
 հետ միանալով կռուել ռուսաց դէմ: Վերջերում նա նոցա ու-
 դարկեց խմայել փաշայի առաջնորդութեամբ, որ յետ առնեն Բա-
 յաղետը: Այդ տեղի ժողովուրդը, որ մեծաւ մասամբ հայեր էին
 և ռուսների տիրապետութիւնից յետոյ խաղաղ ապրում էին,
 իբրեւ զոհ ենթարկուեց վայրենի քրդերի մալեռանդ կատաղու-
 թեանը, որոնք 1877 թ. Յունիսի 18-ին յարձակուեցին քաղաքի
 վրայ: Այն կողակները, որոնք բերդի պաշտպանութեան համար
 միջնաբերդում լնացել էին, ոչնչով չէին կարող օգնել քաղաքին,
 թէ և իւրեանց գիրքով միանգամայն իշխում էին քաղաքին, — ո-
 րովհետեւ Տէր-Ղուկասեանը իրաւ է թողել էր մի քանի փոքրիկ
 լեռնային թնդանոթներ, բայց վառօտ և գնդակ չէր թողել — նո-
 ցա արիւնը համարեա սառաւ նեարդերի մէջ, երբ տեսնում էին
 թէ ինչպէս անխիղճ քրդերը անխայ կեռալով կոտորում են անզէն
 քրիստոնեաներին, լսում էին նոցա օգնութիւն կանչող աղաղակնե-
 րը, նկատում էին թէ ինչպէս կողոպտում էին քրիստոնիանելի ինչ-
 քըն ու ստացուածքը: Այնուհետեւ միջնաբերդում փակուածների
 համար սկսուեց չարչարանքով և զրկանքով լի ժամանակ: Իրաւ է
 անհամեմատ բազմաթիւ քրդերը չհարձակուեցին յարձակում
 գործել, որովհետեւ նոքա չգիտէին որ թէ պաշտպանութեան
 պաշարը աննշան էր և թէ կողակները թւով քիչ էին: Բայց նո-
 քա բերդակալներին շատ նեղը լծեցին, գնդակների կարկուտով նո-
 ցա հեղեղելով: Այդ գնդակահարութեան հետքերը եւ կարողացայ
 տեսնել թէ շրջապարսպի և թէ ներքին բնակարանների վրայ: Այդ
 գնդակա ձգութիւնը ոչ մի վնաս էլ չէր տալիս, բայց ռուսների համար
 երջանկութիւն էր, որ թշնամիները թնդանոթներ չունէին, ուստի
 վճռել էին քաղցով և մահաւանդ ծարաւով առնել միջնաբերդը:
 Միջնաբերդում ջուրը ստացւում էր հարեան մի կրճից սկզբնական

դրութեամբ շինուած մի ջրանցքի միջոցաւ. այդ ջրանցքը քրդերը ոչնչացրին և այդ ժամանակից շուտով սկսեց զգալի դառնալ ջրի պակասութիւնը և դրանից առաջացող բոլոր տանջանքները: Չնայած այդ բանին կողակները անձնատուր չեղան, որովհետեւ այդ գէպքում մահը անխուսափելի և չարչարալից կը լինէր. ընդհակառակը իւրեանց կեանքը վտանգի ենթարկելով քրդերի հրացանաձգութիւնից, ամեն օր բերդից դուրս գալով գնում էին մերձակայ աղբիւրից անհրաժեշտ ջուրը բերում: Ես տեսել եմ այն 2, 3 աղբիւրները, որոնք հոսում են այն դուրս ընկած ժայռից, որի վրայ կառուցած է միջնաբերդը և զարմացել եմ այն դէպի մահը արտայայտած արհամարհանքի վրայ, որով առաջնորդուած ամեն օր 2 կամ 3 կողակներ իրիկնապաշին, առանց որ և է պահպանողութեան, ենթարկուած քրդերի գնդակների անձրեւին, ներքեւ էին իջնում ջուր բերելու որպէս զի թէ իրանց և թէ ընկերներին ջուր մատակարարեն և ազատեն անխուսափելի մահից: Չնայած որ նոքա մի քանի անգամ մարդ ուղարկելով Տէր-Ղուկասեանից օգնութիւն էին խնդրել, բայց նրանից ոչ մի ձայն չէր լսուում և ոչ էլ ազատիչ գունդ էր հասնում: Բայց նա ինքը շատ նեղութեան մէջ էր, որովհետեւ մի անգամ Յունիսի 16-ին ջարդ կրելով Մեհմեդ փաշայից Սեյդեկանի մօտ և Յունիսի 22-ին Մուխտար փաշայից Ելքորի մօտ, ստիպուած էր եղել յետ քաշուել Ուչ-Քիլիսա և վերջում կարողացել էր մի յանգուզն արշաւանքով, որ կատարեց լեռների միջով, վերագառնալ Խզդիր և ազատել իւր զօրքը վերջնական կոտորածից: Ուտելիքի և խմելիքի պակասութեամբ բերդակալների տանջանքը իւր գազաթնակէտին էր հասել: Այնքանոն ներս ընկած, երեսներս գծեղն այս ու այն կողմն էինք քաշ գալիս, պատմում էր ինձ մասնակցողներից մէկը, մեր անգամները դողում էին, թոյլ յոգնած, ուժասպառ: Մեզ համար երջանկութիւն էր, որ քրդերը չէին փորձում մեզ վրայ յարձակուել, որովհետեւ վերջերում մենք անկարող էինք ընդդիմութիւն ցոյց տալ, այնքան էինք թուլացել և ընկել, մահաւանդ ջրի պակասութեան պատճառաւ, այն էլ միջօրէական ջերմութեան ազդեցութեան տակ:

Ահա երբ բոլորս արգէն յոյսներս կտրել էինք և իւրաքանչիւր ոք ցանկանում էր որ իւր վախճանը շուտ հասնի, Յուլիսի 10 ն մերօրէք Տէր Առկասեանի առաջնորդութեամբ Իգգիրից դուրս գալով լեռների միջով եկան մեզ օգնութեան: Քրդերը այդ յարձակմամբ իւրեանց վտանգի մէջ գտնելով աննշան պատերազմից յետոյ անկանոն փախան դէպի լեռները, իսկ մենք այդ անսպասելի ազատութեան շնորհիւ փրկուելով անխիղճ քրդերի ձեռքից ուրախութեան արտասուներով լի աչքերով ընկանք մեր եղբայրների գիրկը, 24 օրուայ զարհուրելի պաշարման ենթարկուելուց յետոյ: Միւսնոյն ժամանակ Տէր Առկասեանը յարմար չյայտարարեց Բայազետը պահել, այլ իւր հետ վերցնելով բերդապահ զօրքին, դարձաւ Իգգիր, ուր նա բաւական դժուարութեան մէջ էր ստիպուած լինելով շարունակ յետ մղել Խամայիլ փաշայի անդադար յարձակումը:

ձաշից առաջ ես գնացի բերդի կառաւարիչ Մեհմեդ էփենդուն այցելութեան: Նա ընդունեց ինձ քաղցրութեամբ և մինչդեռ մենք մանրիկ փինջաններով սև սուրճ էինք խմում, մանրամասն տեղեկութիւն տուեց Բայազետի մէջ և շրջակայքում պատահած պատերազմների մասին և միւսնոյն ժամանակ պատմեց Բայազետի տոհմային փաշաների պատմութիւնը, որոնք իբրև զինանշան ձիու երկու պոչ ունէին: Մի սպայի առաջնորդութեամբ զիտեցի Մահմուտ փաշայի նախկին պալատի բոլոր շինութիւնները, որի բանտում մի քանի ամիս փակուած էր մնացել Նապոլէոն առաջինի Պարսից Շահի մօտ ուղարկած խորհրդակցներ և երբ արգէն վճռուած էր նրա մահը մի հրաշքով ազատուել էր: Շինութեանց մէջ տեսայ նաև մի բաւական ամուր և գեղեցիկ շինուած մզկիթ ներսում երկու մեծ մասերով: Ներսի այն մասը, որ այժմ իբրև աղօթատեղի գործ է դրուում, զարգարած է, մանաւանդ գմբէթի ներսի մասը, գեղեցիկ նկարներով, որ լաւ պահպանուած են. ես բարձրացայ մզկիթի բարձր մինարեթը, որը 90 աստիճան ունէր և այնտեղից վայելեցի առաջն տարածուող քաղաքի և շրջակայքի տեսարանը:

Խակ ընդհանրապէս միջնաբերդի ներսի մասի տեսարանը խիստ ողորմելի է. ամեն տեղ նկատուում է երկրաշարժից, պատերազմից, քամուց և վատ եղանակից առաջացած աւերակներ, մանաւանդ շատ աննշան բան է մնացել երբեմն շատ հարուստ պաճուճանքներից: Տաճիկները բնականաբար բնակարանների պահպանութեան համար ոչինչ չեն անում և հետեւապէս արդէն մի քանի տասնեակ տարիների խնդիր է այդ մի ժամանակ հպարտ և բազմահռչակ պալատի վերջնական կործանումը: Բերդապահները տեղաւորուած են մի մեծ տեղում, որ գուցէ մի ժամանակ Բայազետի իշխանների պաշտօնեաների և սպաների ժողովման դահլիճն էր, իսկ այսօր ցեխի և անկարգութեան մէջ թաղուած է: Այն ջրանցքը, որ քաղաքի պաշարման ժամանակ քրդերից աւերուել էր, վերանորոգուել է և առաջուայ պէս մատակարարում է անհրաժեշտ ջուրը: Պատմում են, որ պալատի մէջ մի ժամանակ մի տղբիւր կար, որը մօտ 50 տո բարձրութեամբ խփելով դուրս էր ժայթքում, այժմ անհետացած է:

Ես ինձ հետ ունէի լուսանկարչական գործիքներս և մտադիր էի միջնաբերդից նկարել թէ քաղաքի տեսարանը և թէ հին ու այժմ կործանուած պարիսպները, բայց երբ մտադրութիւնս յայտնեցի Մեհմետ էփենդուն՝ հրաժարուեց ինձ թողլուութիւն տալ: Նա այդ պատճառաբանեց նրանով, որ իմ թեսկերէի մէջ ոչինչ չէ աւսուած լուսանկար հանելու իրաւունքի մասին. ես էլ իմ կողմից մատնանիշ արի այն կէտի վրայ, որի մէջ ասուած էր, որ երկրի կառավարիչները պարտաւոր են իմ գիտնական աշխատանաց մէջ ինձ օգնել, բայց անօգուտ: Նա ինձ պարզութեամբ խոստովանեց, որ վախենում է առանց իւր գլխաւորի՝ մութասթարիֆ փաշայի հրամանի համաձայնուել թողլ տալ, որ ես լուսանկարներ վերցնեմ: Իրաւ է նա պատրաստակամութիւն յայտնեց հեռագրի միջոցաւ խնդրել վերջինի համաձայնութիւնը, որ Կ. Պօլսից նոր վերադարձած գտնուում էր առ ժամանակ մերձակայ Դիադինում: Նա ուզում էր դրա համար յատկապէս հեռագրել նաեւ Էրզրում մի սերասկարին, բայց երբ ես իմացայ որ գալիք պատասխանի հասնելը 4-ից մինչև 5 օր կտեւի, շնորհակալութեամբ հրաժա-

բուեցի նրա բարեկամական առաջարկութիւնից: Այն ժամանակ ինձ համար միանգամայն անհասկանալի էր, թէ ինչպէս կարող է հեռագրի փոխանցումը այդքան տեւել, մանաւանդ որ մի միջակ ձիով կարելի էր կէս օրուայ մէջ հեշտութեամբ Ղիազին հասնել և հետեւապէս նամակի միջոցաւ կարելի էր մի օրումը փաշայի պատասխանը ստանալ: Բայց երբ վերջում իմացայ, թէ ինչ ողորմելի դրութեան մէջ են տաճկական հեռագրական գծերը, հասկացայ ամեն բան: Ես կարծում եմ, իւրաքանչիւր անգամ երբ կարիք կայ մի որ և է գծով հեռագիր ուղարկել, նախապէս այդ գիծը մի կերպ կարգի է բերւում և ապա հեռագիրը խիւռւմ: Յամենայն դէպս բերդապետի արտակարգ երկիւղը իւր կիսակործան միջնաբերդի և կործանուած շրջապարսպի մասին, արգելք եղաւ նկարելու այդ զարմանալի և գիրքով շատ հետաքրքիր տեղը: Վերջումը ինձ հիւրընկալող երկու սպաները խնդրեցին ինձ նոցա նկարել, թէ և այդ հակառակ է կորանին: Ես յայտնեցի պատրաստակամութիւնս բայց երբ ասացի որ կարող եմ միայն վանում պատրաստել խիական պառկերը և այնտեղից ուղարկել, նոքա դժգոհ հրաժարուեցին նկարուելուց: Մեր կէսօրուայ ճաշը նոյն ողորմելի ճաշն էր ինչպէս նախնիքաց իրիկունը, բայց սյս անգամ նոյն ախորժակը չունենալով, այնպէս ախորժակով չկերանք:

Շուտով այցելութեան գնացի Յովհաննէս արքեպիսկոպոսին որը ինձ ընդունեց հաճոյականութեամբ, ակնարեւ կերպով ուրախ մի եւրոպացու տեսնելու, այն էլ հայերից ընդհանուր սէր վայելող մի գերմանացու: Երբ նա Սարգսից տեղեկացաւ, թէ ինչպէս վատ էր տաճիկների մեզ տուած կերակուրը, չնայած իմ հակա-

1. Ծան. Թարգմ. Այս բառերն էլ պարոնի չափազանցասիրութեան արդիւնք են. ինչպէս նա անկասկած դիտմամբ շատացրել էր Ղազարապատի սենեակների թիւը և մանաւանդ իրան թոյլ էր տուել Սարգիս սրբազանին Տեղապահ անուանելու, որից նա իբր թէ կոնգակ է ստացել, Մենք իմացանք հաստատապէս, որ Սարգիս սրբազանը միանգամայն անպարտ է գերմանացու չափազանցութեան մէջ, որ Սրբազանը իրաւ է իւր քաջայայտնի հիւրասիրութեամբ նրան հիւրասիրել է, բայց իւր նորան տուած գրութիւնը հասարակ եպիսկոպոսական թուղթ է եղել, հետեւապէս պ. Բեւթը նրանից կոնգակ է ստացել և ինչ որ գրել է, ասել է իւր գլուխը գովելու նպատակաւ (Տես Մայիսի Արար էջ. 431):

ռակութեանը պատուիրեց իսկոյն համեմատաբար աւելի լուկու-
 լեան սեղան պատրաստել՝ բաղկացած չորս տեսակ կերակուրնե-
 րից, որի ժամանակ պակասում էր միայն գինին որ ինձ համար մի
 տեսակ կարիք էր դարձել երեք տարի Հայաստանում մնալուց
 յետոյ: Ես հաւատալով Ռուսաստանի իմ հայ բարեկամների տուած
 տեղեկութիւններին, ըստ որում Տաճկաստանում աւելի լաւ գի-
 նի պիտի լինէր, քան Ռուսահայաստանում, փոխել էի մտադրու-
 թիւնս և հետո չէի վերցրել երկու վեդրօ արգէն գնած պատրաստ
 ընտիր երեւանեան գինին: Այդ ինձ շատ ցաւ պատճառեց, որով-
 հետեւ այնտեղ հազուագիւտ է փոքր ի շատեւ խմելու գինին:
 Երբ Յովհաննէս արքեպիսկոպոսը Սարգսի միջոցաւ իմացաւ իմ
 սէրը գէպի գինին, իսկոյն բաղար ուղարկեց մի քանի մարդիկ, որ
 աշխատեն գինի գտնեն և բերեն, բայց դատարկաձեռն յետ
 դարձան, որովհետեւ չնայած Բայազետը ռուսական սահմանի մօտ
 է գտնւում և այնտեղ միշտ հայեր են ապրում, չէին կարողա-
 ցել մի կաթիլ գինի գտնել: Իսկ ընդհանրապէս ինձ հովանաւո-
 րող Սարգիս եպիսկոպոսի ջերմ՝ յանձնարարական նամակը ունե-
 ցաւ իւր ազգեցութիւնը նաեւ այդ հոգեւոր իշխանի վրայ (Յով-
 հաննէս եպիսկոպոսի): Նա ինձ ոչ միայն մանրամասն տեղեկու-
 թիւն տուեց Բայազետի և Ալաշկերտի շրջաններում ապրող ժո-
 դովրդեան լնկերութեան, քաղաքական դրութեան մասին, այլ
 և ուրախութեամբ խնդրանացս համաձայն թոյլ տուեց գնալու
 Ուշքիլիսա վանքը, ուր նա սուրբաբար նստում է: Նա հրամայեց
 իւր անձնակազմն ատենադպրին նամակ գրել այնտեղի իւր պաշ-
 տօնը կատարող վանահօրը, վանքի միւս միաբաններին և մառա-
 նապետ եղբօրը, որ ինձ շատ լաւ ընդունեն, իրանց ոյժերի հա-
 մաձայն օգնեն ինձ իմ հնագիտական աշխատանաց ժամանակ և
 թէ ինձ և թէ ընկերներին հիւրասիրեն խոհանոցի և մառանա-
 տան ունեցած կերակուրների և խմիչքների ամենալաւ տեսակով:
 Սրբազանը յայտնեց ինձ, որ Վանայ լճի շրջակայքում կան
 բաւական մեծ թւով բնակավայրեր, որոնք մինչև օրս էլ Եւրո-
 պայում անյայտ են, նրա տուած բոլոր տեղեկութիւնները ճիշտ
 էին, ես ատագրեցի և հետո վերցրի նրա յիշած արձանագրու-

թիւները, այնպէս որ բեւազրերի ուսումնասիրութիւնը թէև ոչ անմիջապէս, ստատական է իւր թւական շատութեամբը նաև ցովհաննէս արքեպիսկոպոս Տէր-Աստուածատուրեանին, որովհետև նա նպաստեց հայերէն բեւազրեր անունը կրող բեւազրերի բաղձանալուն:

Ճաշից յետոյ շարունակեցի Բայազետը ուսումնասիրել, որի բնակիչների թիւը վերջին պատերազմի շնորհիւ կիսից աւելի է պակասել: Անկասկած դա առաջ նշանաւոր քաղաք է եղել, բայց արդէն 1828 թ. ռուստաճկական պատերազմի ժամանակ քաղաքի հայ բնակիչների մեծ մասը գաղթեց Առևտրահայրատան և այնտեղ Սեանայ լճի հարաւային ափի վրայ հիմնեց Նոր-Բայազետ կոչւած քաղաքը, որը այժմ 7000-ից աւելի բնակիչ ունի: Չնայած դրան՝ Բայազետի բնակիչների թիւը մինչև 1878 թ. հաշւում էր մօտ 5000 հոգի, և այսօր նրա 15) տուն հայ և 16) — 18) քուրդ և տաճիկ տների բնակիչները հազիւ կազմեն 2000 հոգի: Ես կրկին անգամ գնացի քաղաքի ուղորմելի բազարը, այցելեցի քաղաքի մի քանի յայտնի հայերին, որոնք բոլորն էլ գտնւեցին կերպով գանգատուած էին մահճատականների, մանաւանդ քրդերի տուած նեղութիւնների և ճնշումների մասին: Թէ այդ գանգաւները անհիմն չէին, համոզուել եմ ես, թէ հեղինակաւոր տեղերից հատառտութիւն գտնելով և թէ ինքս անձամբ անձին իբրև ակնատես տեսել եմ: Հայերի դրութիւնը անտանելի է մանաւանդ այնպիսի շրջաններում, ուր նոցա թիւը մահճատականների և քրդերի վերաբերմամբ քիչ է, ինչպէս են Բայազետի և Ալաշկերտի վիճակները. մինչդեռ ուր հայերի թիւը շատ է, օր. վանի, Էրզրումի, Բիթլիսի վիլայեթութիւններում, այնտեղ քրիստոնեաների դրութիւնը համեմատաբար աւելի տանելի է: Ամենից առաջ գլխահարկի ծանրութիւնն է խիստ զգալի, որովհետև իւրաքանչիւր քրիստոնեայ անձը իւր ծննդեան օրից ի վեր պարտական է 40 դուրուշ վճարելու, իբր թէ զինւորական ծառայութեան վտարէն, որից նա ազատ է: Որովհետև ես վանում տեսայ բաւական թւով հայ զինւորների, որոնք ի հարկէ յետ չեն ստացել իւրեանց վճարած գլխահարկը, որ նոքա տուել են մինչև ծառայութեան մէջ

մանելը ինչ որ օրէնքով արդարացի կլինէր: Քուրդերը որոնք մինչև 1891 թ. զինւորական ծառայութիւնից նոյնպէս ազատուած էին, ոչինչ չէին վճարում: Բացի այդ՝ տէրութիւնը իւրաքանչիւր ոչխարի համար տարեկան 3 1/2 զուրուշ է պահանջում որ համեմատած կենդանու արժէքի հետ, զարհուրելի է (մի պարարտացրած ոչխարը արժենում է 20-ից մինչև 30 զուրուշ): Եզները և ձիերը մինչև վերջին ժամանակները հարկից ազատ էին, բայց տէրութիւնը մտադիր է նոցա էլ հարկի տակ գցելու: Օրէնքով տէրութիւնը պահանջում է հունձի մի տասներորդը, սակայն իրապէս համարեա բոլոր վիւայեթութիւններում այդպէս չէ, այլ փաշաները իւրեանց անձնական օգտի համար պահանջում են և ստանում աւելի շատ, օրինակ Բայազետում ստացւում է հունձի մի ութ երորդը: Քաղաքացիների համար հունձի տեղ հնարել են ուրիշ տեսակ հարկեր, այդպէս օրինակ Բայազետի իւրաքանչիւր ընտանիք վճարում է տարեկան 50-ից մինչև 200 զուրուշ հարկ, բայց ի հարկէ այդ չափով վճարողները հայերն են, քրդերն ու տաճիկները կամ բոլորովին չեն վճարում, կամ քիչ: Յետոյ իւրաքանչիւր արհեստաւոր պարտաւոր է մեծ տուրք տալու. օրինակի համար Բայազետի մէջ մի որմնադիր տարեկան 3 լիրա և 4 զուրուշ հարկ է վճարում, մինչև անգամ գրագրերն էլ պէտք է արհեստի տուրք վճարեն: Հարկի են ենթարկուած նաև Հայոց վանքերն, որոնք բացի տասնորդականից առանձին փող էլ են վճարում, հակառակ տաճկական յատուկ օրէնքին, ըստ որում նոքա հարկից ազատ են. օրինակ Ուչքիլիսան, Յովհաննէս արքեպիսկոպոսի վանքը պարտական է տարեկան 260 զուրուշ վճարել: Բնական է որ այդ փողերը մտնում են փաշաների գրպանները, որոնք առաջներումը իմանում էին ուրիշ եղանակաւ էլ փող հաւաքել, օգտուելով այն առանձին յարգանքից, որ ստանում են հայերը գէպի վանքերը: Այդպէս 20-ական թուականներին Վանի Դերվիշ փաշան պատուիրել էր, որ վանքերում մեծ տօներին հաւատացեալների կողմից հաւաքուած գանձանակը պէտք է տէրութեան, այն է իւրեան, և վանքի մէջ բաժանուի: Եւ որպէս զի այդ հաւատարհով ըստ կարելոյն շատ փող ստանայ, օգնում էր վան-

քերին և ամեն կերպ պաշտպանում էր մեծ հռչակ ունեցող սուրբ տեղերի իրաւունքները, նա մինչև անգամ ստիպում էր տեղացի մահմետական ժողովրդեան յաճախել այդ տօներին: Այդ անկարգութիւնները այժմ թէև իբրև վերացած են համարւում, բայց շատ տեղ գեռ շարունակւում են իրապէս ծածուկ կերպով:

Այս բոլորի վրայ ծանրանում է այն պարտականութիւնը որ դրած է գիւղացիների վրա. օթեւան և կերակուր տալ ճանապարհորդող զինուորներին և այն էլ ոչ միայն նոցա, այլ նաև պաշտօնեաների ամբողջ բանակին: Եւ որովհետև տէրութեան կողմից զինուորներին տուած սնունդը մի առանձին բան չէ, ուստի նոքա ամեն միջոց գործ են գնում որպէս զի ուրիշ տեղ գնալու պատուէրների ստանան, ուր նոքա գիւղերում ամենահիմնալի կեանք են անցկացնում և գիւղացիներին ստիպում են լաւագոյն պատառը իւրեանց տալ: Եւ որ կամքով չեն ստանում, վերցնում են բռնի և բացի այդ զինուորը գնալուց յիշատակի համար մի բան էլ է պահանջում իբրև զիշքիրասի. կամ մի ընծայ է առնում կամ աննկատելի գրպանն է դնում ծխախոտ ևն: Զինուորները աւելի սիրով իջնում են հայերի գիւղերում, թէ համեմատաբար աւելի մեծ մաքրութեան պատճառաւ և թէ որովհետև խնամքը աւելի լաւ է լինում. միայն ծայրահեղ գէպքերում են վճռում մնալ տաճիկների և քրդերի գիւղում: Իսկ զիշերները ոչ մի կերպ չեն ցանկանում այդ վերջինների մօտ օթեւանել և այդ զգուշքը նկատւում է թէ զինուորների և թէ քուրդ ու տաճիկ ազնուականների կողմից: Այդ խորշումը այն աստիճանի է հասնում, որ եթէ մի գիւղում կան 10 տուն հայեր և 100 տուն քրդեր կամ տաճիկների, եկևոր քուրդ կամ տաճիկ պաշտօնեան անպատճառ կը գիշերի քրիստոնէայ հայի մօտ, փոխանակ մահմետական քրդի մօտ գնալու: Եւ զինուորների այդ թափառաշրջիկ խմբերը մի տեսակ պատուհաս են երկրի համար, մանաւանդ սահմաններին կից տեղերում նոքա ծծում են հայի տրեան վերջին կտրիլը, խլում են նրա վերջին խտտի, հատիկների մնացորդը: Երբեմնակի կողոպտում են այդտեսակ խմբերը, եթէ նոքա մի որևէ փաշայի կամ բէկի առաջնորդութեան տակ են, Բայազետի նման քաղաքներն անգամ:

Այդպէս 1891 թ. Կ. Պօլսից Բայազետ եկաւ Հասան փաշան 50 զինւորներով և բռնութեամբ կորզեց տեղացի հայերից 50 լիրա այն պատրուակաւ, որ նրանով պիտի կերակրի իւր զինւորներին: Յովհաննէս արքեպիսկոպոսն էլ է ստիպուած եղել 4 լիրա վճարելու, որովհետեւ ով որ չի վճարել, նրան բանտ են նետել: Թէ այդ բոլորից յետոյ քրիստոնեայ հայերի գրութիւնը Տաճկաստանում նախանձելի լինել չէ կարող, հասկանալի է, ուր նոքա մինչև այսօր տաճիկների և քրդերի ձեռքի տակ ստրուկներ են, թէև Սուլթանը Բերլինի վեհաժողովում բոլոր տէրութեանց առաջ հանդիսաւոր կերպով խոստացաւ Հայաստանում բարեփոխութիւններ մտցնել:

Երեկոն դարձեալ անցկացրի հաճոյաբարոյ Յովհաննէս արքեպիսկոպոսի հասարակութեան մէջ, որովհետեւ երկու թուրք ըսպաները ալլէս չերեացին իմ բնակարանումս և բաւականացել էին միայն ինձ համար իրիկնահացին կաղամբով պատրաստած ոշխարի միս ուղարկել: Դրա փոխարէն յարգելի ծերունին ինձ համար պատրաստել էր իրաւամբ ճոխ սեղան, որի հետ մինչև անգամ գինին էլ կար: Երբ ես հարցրի, թէ որտեղից է այդ գինին, յայտնեց, որ իւր ցանկութեան համաձայն Բայազետի քահանան պատարագի գինուց ուղարկել է մի շիշ: Արդէն ժամի տասն էր, երբ ընդհատելով մեր խօսակցութիւնը քնելու գնացի:

V.

ԲԱՅԱԶԵՏԻՅ ՄԻՆՁԵՒ ԴԻԱԳԻՆ:

Երբ ես միւս օրը հրաժեշտ տուի հաճոյաբարոյ արքեպիսկոպոսին, նա օրհնեց ինձ և իրրեւ ուղեցոյց ինձ հետ դրեց իւր անձնական քարտուղար Արշակ սարկաւազին, որը ինձ պիտի Ուլքի-լիսա տանէր և պիտի հոգար, որ ինձ լաւ ընդունէին:

Առաւօտեան ժամի 9½ երեացին նաև իմ երկու ուպաները հրաժեշտ վերցնելու և երբ ես հարցրի ճանապարհների ապահովութեան մասին, յայտնեցին, որ ոչ մի վտանգ չկայ, ուստի բաւական էին համարում ինձ միայն մի զինւոր տալ պաշտպա-

նութեան համար: Խրական գրութիւնը այնպէս է, որ տաճկական բոլոր վիլայեթութիւններն էլ անապահոյ վիճակի մէջ են, այնպէս որ Ալթամարի կաթողիկոսը թէեւ Վանի պէս մեծ քաղաքից միայն 50 վերստ հեռաւորութեան վրայ է գտնուում և իւր բնակատեղից 10 վերստ հեռու նստում է մի գայմազամ ստիպուած է եղել իւր կեանքի ապահովութեան համար վերջինից զինւորներ խնդրել, որպէսզի պաշտպանուի վայրենի քրդերի յարձակումից: Ընդհանրապէս Եւրոպացիին, որ ճանապարհորդում է այնտեղ շատ թւով ուղեցոյցներով, պէտք է միշտ սրտի հանգստութեամբ աչքի առաջ ունենայ յարձակումներ, միայն խոյս տալով այնտեակ բաներից, ինչ որ կարող է քրդերի, մոնաւանդ նրանց բէկերի ընչաքաղցութիւնը շարժել, միայն այդ դէպքում կարելի է յուսալ անփոռնգ ճանապարհորդել ասիական Տաճկաստանի այդ մասում: Եթէ ես կարողացայ ամբողջ ամիսներ ճանապարհորդել Քուրդիստանում¹ և համարեա ապահոյ մնացի, առնուազն ոչ մի անգամ ծանր ընդհարում չունեցայ քրդերի հետ, այդ ես վերագրում եմ հետեւեալ հանգամանքին. ես հետս քիչ թւով զինւորներ էի վերցնում, ըստ կարելոյն քիչ իրեղէններ ունէի, ձիավարում էի շատ ազքատ հագուստներով, այնպէս որ փոքր ի շատե՛ իւր սրտիւր ճանաչող աւազակը չէր կարող ընդունել, որ այդ տեսակ անձը իւր հետ կունենար փող կամ թանկագին իրեղէններ: Բացի այդ վտանգի ժամանակ ամենից քիչ պիտի յոյս դնել առաջնորդող զինւորների վրայ, որոնցից կարելի է ամեն բան սպասել բայց ոչ պաշտպանութիւն. պէտք է ազգահոյ լինել, որ այդ մարդիկը քրդերի հետ հանգիպելով ծանր դէպքում իւրեանց փրկութիւնը կորոնեն փախուստի մէջ և Եւրոպացուն անօգնական կը թողնեն, մինչև անգամ եթէ թւով տւելի շատ լինեն, քան յարձակուողները: Նոքա օգտակար են միայն իբրև առաջնորդներ, բայց սրանից անբերեա ժողովրդին ճանապարհորդից հեռու են պահում հակառակող գիւղացիներին ստիպում են օթեան

1. Ծան. Թարգմ. Սա էլ է Հայաստանի փոխարէն Քուրդիստան սխալ գործուածը գործ դնում ի հարկէ ի նկատի ունենալով Տաճկի կողմից հրատարակած անունը:

տալ, արժան գնով թէ կենդանիների և թէ մարդկանց համար կերակուր գնել:

Այդ բոլոր բաների մասին ես տեղեկութիւն էի ստացել իմ ծառայից, որ քաջ ծանօթ էր Տաճկաստանում եղող պայմաններին, ուստի քաղաքավարի՝ բայց հաստատ կերպով երկու զինւոր պահանջեցի, որպէս զի մէկը տանի իմ իրեղէնները, որ ես առաջ էի ուղարկել, իսկ միւսը ինձ մօտ մնայ, սպաները քիչ տատանելուց յետոյ համաձայնեցին կատարել կամքս: Ժամի 10-ին նոցանից հրաժեշտ վերցնելով ճանապարհ ընկայ դէպի Դիադին Արշակի և մի զինւորի ուղեկցութեամբ. Սարգիսը միւս զինւորի և բեռնակիր ձիու հետ կէս ժամ առաջ էր ընկել: Մի քառորդ ժամ յետոյ ձիավարում էինք Զանգեզուր բերդի մօտով, որի ստորոտում գտնւում է համանուն քրդական գիւղը, սա Բայազետի շրջակայքում միակ գիւղն է, որ վարսակի դաշտեր ունի: Արովհետեւ կարաբուլաղի և Բայազետի մէջ ընկած մեծ, գեղեցիկ տարածութիւնը, որի վրայ ապրում են քրդեր, ընկած է անմշակ, միայն քիչ խոտ է տալիս ճահճային տեղերից, որ բաւական թանկ գնով ծախւում են Բայազետի բաղարում:

Եղանակը հրաշալի էր, շնորհիւ մի բաւական զօրեղ սառ քամու շուաքի մէջ ջերմութեան աստիճանը հասնում էր միայն 18⁰ C., չնայած որ երկինքը ամպերից ազատ էր. այնպէս որ՝ մենք յառաջ էինք արշաւում շատ արագ հարթ, ուղիղ ճանապարհի վրայ: Ճանապարհը տարածւում էր Մաղաղի շղթայի ստորոտում և ուղղուած էր դէպի արեւմուտք: Արարատը, որի գագաթը սովորականին համաձայն ծածկուած է ձիւնով, հարաւից այն վեհ տպաւորութիւնը չէ թողնում, ինչպէս հիւսիսային կողմից. կարծես թէ այս կողմից աւելի հեշտ պիտի լինի նրա վրայ բարձրանալը: Ես գիտեցի, թէ Զանգեզուրի քրդերը ինչ եղանակով են հերկում երկիրը. իսկապէս նրանց արար չէր կարելի հերկած կոչել, այլ մի տեսակ նախնական ցաքանումն էր: Իսկ խզդիրում հանդիպում ենք ոչ միայն տեղական ծանր գութաններին, որից մի քանիսը մինչև 12 լուծ եղներով, այլ նաև բազմաթիւ թեթեւ և լաւ շինած ամերիկական արօբների: Այդ փոքրիկ տարածութեան վրայ ինչքան մեծ

տարբերութիւն: Մեր անցած տեղի տեսարանը տեսնելու ոչինչ ուրախալի բան չունէր: Հիւսիսից և հարաւից դաշտալայրը շրջափակող լեռները միանգամայն լերկ են. ոչ աւետառ, ոչ ծառ, ոչ թուփ կայ, մինչև անգամ խոտ էլ չի բուսնում: Եւսի 11 1/2 անցանք 2-ից մինչև 3 վերստ մեզնից հիւսիս տարածուող Արծալ լեռնաշղթայի հարաւային կողմը, որի այդ մասն էլ խիստ զառիվայր է, նորա ստորոտում գտնւում է 40 ընտանիքից բաղկացած հայկական Արծալ գիւղը, որի բնակիչները մտադիր են ռուսագաւանութիւն ընդունելու, այդ պատճառաւ մի ռուս քահանայ սովորցնում էր նոյա իւրեանց կրօնի սկզբունքները¹: Այդ հաւատափոխութեան պատճառը պէտք է որոնել այն անտանելի ճնշման մէջ, որին ենթարկուած են նորաքրդերի կողմից և յոյս ունին որ հաւատները փոխելով կարող են իբրև օրթոդոքսներ պաշտպանութիւն գտնել ռուսների կողմից: Թէև այդ հաւատափոխութիւնը ռուսաց տէրութեանը հաճելի է, բայց դժուար է ընդունել, որ նա վճռի խաղաղ ժամանակները մի քանի գիւղացիների պատճառաւ միորեւէ ծանր քայլ անել: Բայց եթէ ինկատի առնենք, թէ հայերը ինչպիսի զարմանալի տոկոնութեամբ պահպանում են իւրեանց հաւատը և ազգութիւնը, երկու սեպհականութիւն, որ նորա պահպանել են մինչև օրս անփոփոխ, հազար տարուց աւելի տեղը ճնշման տակ, կարող է Արծալի գիւղացիների հաւատափոխութեան մտադրութիւնը մեզ համոզել, թէ հայերի յուսահատութիւնը ինչ ծայրահեղ աստիճանի է հասել տաճկական և քրդական հալածանքների շնորհիւ:

Եւսի 11 5/4 ին հարաւային կողմում բաժանուեց այն ճանապարհը, որը վանի և Բայազետի ուղղակի հաղորդակցութեան ճանապարհն է. մէկից մինչև միւսը հասնելը տեւում է երեք օր: Իսկ մենք շարունակում ենք մեր ճանապարհը ուղիղ դէպի արեւմուտք, ժամի 12 1/2 ին անցնում ենք Գուտնակ չայը, շուտով մրտնում ենք Բարաքաթ քրդական գիւղը, որը շինած է մի առանձնացած լեռան ստորոտում: Այդ տեղից հարթութիւնը փոխւում է այլքաձև բլրային երկրի, իսկ տեղ տեղ էլ բարձրանում են առանձնացած ցած լեռներ, սև հրաբխային քարից: Հարաւում

¹ Արծալում այժմս ոչ ռուս քահանայ կայ և ոչ ռուսագաւաններ: Ծ. խմբ.

մօտաւորապէս 7 վերստ տարածութեան վրայ նկատուած ենք Թոն-
գուրակ լիառը որից ինչպէս ասուած են դուրս են գալիս այրու-
ող գազեր։ Նորա ստեղծուած գտնուած է համանուն, բաւական
նշանաւոր գիւղը որի միջով է անցնում Բայազետից ուղղակի
Վան տանող ճանապարհը։ Մենք արդէն վաղուց էինք Սարգսի
ետեից հասել և ևս Վճռեցի թէ և քամին դադարել էր և կի-
զիչ արեգակի ճառագայթների տակ շատ տաք էր իմ երկու ընկե-
րակիցներուս քիչ արագ գնալ որպէս զի կէսօրից յետոյ շու-
տով հասնեմ Գիաղին և խօսեմ վաշայի հետ։ Ժամի 1 1/4-ին
անցնում ենք ժանդարմների մի կիսակործան կայարանի մօտից
և գրանով արդէն կիսում ենք Գիաղինի ճանապարհը։ Մեզնից
մօտ 12 վերստ գէպի հիւսիս՝ Արարատեան լեռնաշղթայի ստո-
րոտումն նկատեցի Մուսուն հայկական գիւղը իսկ մնացած մա-
սը՝ սկսած Զանգեզուրից մինչև մեր հասած տեղը՝ ընկած է ա-
մայիս անմշակ։ Ճանապարհը որը պաշտօնապէս Բայազետ — Գիա-
ղինեան փոստի ճանապարհ, անունն է կրում, ներկայ չոր եղա-
նակում հիանալի է, մինչև անգամ կառքով կարելի է անցնել,
բայց տեղացող անձրևների ժամանակ, ինչպէս ընդհանրապէս
Տաճկաստանի ճանապարհների մեծ մասը, կամ անանցանելի կը
լինի, կամ բոլորովին կանհետանայ։ Ժամի 2 1/2-ին բարձրացանք
Խօջօեղօր բարձրութիւնը, որ հիւսիսից գէպի հարաւ տարա-
ծուող ուղղութիւն ունի, բարձր է, լայն և ժայռոտ, նրա արե-
ւելեան փեշերի վրայ՝ ալիքաձև, բարակ խոտով ծածկուած
տարածութեան մէջ գտնուած էր մի քրդական ամառային բնա-
կալայր։ Սճապոտոյս անցնող ճանապարհի այդ մասը մինչև ան-
գամ քարած է։ Ժամի 3 1/4-ին հասնում ենք Խօջօեղօրքի ափին և
այդ տեղից վայելում ենք հեռուն տարածուող գեղեցիկ տե-
սարանը, արևմտքում, մեր ոտների տակ ընկած է մեր ճանա-
պարհորդութեան նպատակը՝ Գիաղինը, գէպի արևելք տեսնում
ենք մի անգամ ևս մեր անցած ամբողջ տարածութիւնը։ Մեծ
Արարատը ամբողջովին ծածկուած է ամպերով, փոքր Արարատի
վերաբերմամբ տաջին անգամն եմ նկատում, որ նրա հարա-
ւային փեշը, հիւսիսայինի հակառակ, դեռ չէ ծածկուած նոր

ձեան շերտով: Այգտեղից սկսած երկրի մակերևոյթի կերպարանքը խիստ բլրային և լեռնոտ է, ճանապարհը առաինճանաբար ցած իջնելով անցնում է Դիաղիճի քրդերի հացաբոյսերի դաշտերի միջով: Մի և նոյն ժամանակ աչքի է զարկում, թէ ինչ առանձին ձևով են ճաճկատառնի այդ մասի հպատակները ցանում իւրեանց դաշտերը, այնտեղ չէք տեսնիլ ինչպէս մեզ մօտ, խիտ առ խիտ՝ իրար վրայ դարսած հասկերի ծածանուող ծով, այլ կանոնաւոր կերպով շերտերի են բաժանուած, որոնց միջի մասը արձակ է: Այդ նրանից է առաջ գալիս, որ գիւղացիները ամբողջ դաշտը բաժանում են $1\frac{1}{2}$ կամ $1\frac{1}{4}$ ոտ իրարից հեռու՝ խոր ածուներով, որոնց միջով անցնում է դաշտը ջրելու ջուրը. ածուների մէջտեղում բաւական խիտ կերպով հատիկներ են ցանում, մինչդեռ միւս մասերը և մանաւանդ ածուները արձակ են մնում: Այդ տեսակ դաշտի տպաւորութիւնը անսովոր լինելուն պատճառաւ օտարոտի է: Ժամի 4-ից քիչ առաջ հասանք Դիաղին՝ փոքրիկ քաղաքը, և կանգ առինք ժանդարմական կայարանի տան առաջ. այդ օրը ընդ ամենը 36 փերստ անցնելով, Սարգիսը իրեղէններով $1\frac{1}{2}$ ժամից յետոյ հասաւ: Այգտեղ իսկոյն աչքիս ընկաւ արտակարգ արագ կեանք և շարժողութիւնը, ինչպէս նաև զինւորների մեծ թիւը, որոնցից մեծ մասը բանակել էին «քաղաքի» (եւրոպական գաղափարով այդ քաղաք առուածը ոչ այլ ինչ էր եթէ միայն մի շատ ողորմելի գիւղ) գրտի մասում մեծ վրաններում: Դրա մասին բացատրութիւն խնդրելով տեղեկացայ, որ երզնկայի մուշիրը Մեհմեդ Սերի փաշան, Փոքր Ասիայի տաճկական զօրքի ընդհանուր հրամանատարը, այդ ժամանակ այգտեղ էր, որպէս զի զօրք ժողովի և գլխաւորապէս նպատակ ունի կազմակերպել քրդական հեծելազօրքը համաձայն բարձր Դրան նոր կարգադրութեանը: Նոյն այդ պատճառով այգտեղ են նաև նոր Կ. Պօլսից վերադարձած Բայազետի նոր մութեօարիֆ Մեհմեդ Ալի փաշան և Ալաշկերտի ֆերիք Խըրաշիմ փաշան: Բոլոր երեքն էլ միասին գնացել էին 6 ժամ (36 փերստ) հեռուն գտնուող, անմիջապէս ռուսաց սահմանի վրայ ընկած Բալըղ Դեօլը տեսնելու, և սպասում էին, որ շուտով կը վերադառնան:

Աւելորդ չի այստեղ մի քանի խօսք ասել Տաճկաստանի ասիական զօրքի մասին: Եւ միջոց էի ունեցել արգէն Բայազետում և յետոյ աւելի լաւ Դիադինում, Վանում, Բիթլիսում, Մուշում, Էրզրումում ևն. շփուելով տաճիկ սպաների և զինւորների հետ մի տեսակ կարծիք կազմել նոցա արժանիքի և կարողութեան վրայ: Չեմ կարող հաստատել, որ իմ կարծիքը նպաստաւոր է նոցա կանոնաւոր զօրքի թէ որքանութեան և թէ որակիւթեան մասին: Իրաւ է, հէնց սկզբից չէի ցանկանում եւրոպական զօրքի չափով չափել տաճկաց զօրքը, բայց ինչ որ ես տեսայ, ոչնչով չէր համապատասխանում այն թեթեւ յոյսերին անգամ, որ մենք սպասում ենք ներկայիս զինւորից: Թէ և կօմանդօն և վարժողութիւնները բոլորովին նման էին եւրոպականին և ակներեւ ձեռած են գերմանականի համաձայն, որը Կ. Պօլսից տարածւում է Տաճկաստանի ամենահեռաւոր սահմանները և ընդհանրապէս այդ բաները բաւական ճշտութեամբ են կատարում, բայց զօրքի նիւթը: Ապաներից ծերերի մասին առանձին գովասանական խօսք ասելու ոչինչ չկայ, նոքա իրանց ոչնչով նեղուած չեն զգում ռազմագիտական գիտութեան պակասութեան պատճառաւ, նոյնպէս ակներեւ կերպով նոցա քիչ է նեղացնում այն թոյլ զինւորականին վայել զիբքը չպահելու պակասութիւնը: Ամենագլխաւորը՝ նոցա մէջ չրկայ ձգտում, եռանդ՝ տիրապետող սլայմանների մէջ աշխատել յառաջ գնալ, կատարելագործուիլ. նոքա բաւականանում է ին միայն, եթէ իւրաքանչիւր օր իւրեանց ծառայական պարտաւորութիւնը ըստ կարելոյն քիչ աշխուժով և գովամակութեամբ մի կերպ կատարելով գլխներիցը հեռացնում էին: Եւ ի՞նչ պատճառ ունին իւրեանց նեղացնելու: Արդեօք այն ողորմելի ռոճկի համար, որ նոքա ստանում են՝ օրինակի համար մի իւզբաշին (համապատասխան եւրոպական մայօրին) ստանում է տարեկան 9 1/2 տաճկական փունդ կամ 200 ֆրանկից մի բան աւելի այն էլ ոչ կանոնաւոր: Երիտասարդ սպաները աւելի լաւ կրթութիւն ունին, որովհետեւ նոքա համարեա բոլորն էլ երեք տարի շարունակ վարժուել են Կ. Պօլսի զինւորական ճեմարանում: Նոցանից շատերը կարող են Կ. Պօլսի ի շատէ իրանց մտքերը յայտնել ֆրանսերէն: Խակ հաստ-

րակ զինւորը: Մինչդեռ մենք սովոր ենք մեր զօրքի մէջ թարմ, աշխոյժ երիտասարդներ տեսնել, 20 ից մինչև, առառաւելն, 25 տարեկան հասակում, այնտեղ ըստ երևոյթին միայն 30 տարեկանից բարձրին են ծառայութեան յարմար գտնում և դեռ կարելի է զօրքի մէջ 40, 50 և աւելի տարիք ունեցող անձանց էլ հանդիպել: Մի անգամ հետո վերցրած զինւորներից մէկը 48 տարեկան էր, միւսը 65 տարեկան, որոնցից երկրորդը աւելի էր զիմանում ճանապարհի նեղութիւններին, քան առաջինը: Բայց վերջապէս զգեստները, ինչպէս կարելի էր սպասել, որ մի տէրութիւն, որը յաւակնութիւն ունի Եւրոպայում պատահելիք պատերազմների ժամանակ իբրև գլխաւոր գործողներից մէկը ի նկատի առնուիլ և անհրաժեշտապէս էլ ի նկատի է առնուելու, որովհետև մեծ պետութիւն է հաշւում, իւր զօրքի շորք այդ տեսակ պատառոտած, այս մինչև անգամ աղքատի շորերի գըրութեան հասցրած վիճակի մէջ պահել: Այդ այն աստիճանի է, որ գերմանական զօրքի հինգերորդ ձեռք հագուստը, չնայած իւր մաշուած լինելուն, տաճիկներին վերաբերմամբ հանդէսների շորեր պիտի համարել: Շատ անգամ պատառոտած և ծիածանի բոլոր գոյնանի լաթերով կարկատած շորերը այլ ևս առանձին կերպով աչքի չեն ընկնում: սովորական լինելուն պատճառաւ, բայց մարդուս աչքերը մնում են զցուած այն տեսակ անձանց վրայ, որոնց շորերի պատառուածքը չեն նորոգուած, որոնց վերնազգեստի կարը մի կամ երկու կողմից քանդուելով ամբողջ երկարութեամբ պատառուած է, կամ վարտիկների մէջ այն տեսակ կասկածաւոր ծակեր ունին, որ եթէ Գերմանիայում մէկը նման վարտիկ ունենալու երջանկութիւնը ունենայ, նրան բռնելով անմիջապէս մերձակայ ոստիկանատունը կտանեն իւր արած անկարգութեան համար: Եւ իրաւամբ՝ այս զինւորների և մի քանի մզոն դէպի հիւսիս բանակող ռուսական զինւորների մէջ եղած տարբերութիւնը ահագին է, թէ արտաքինի և թէ պատերազմական հմտութեան մէջ և որ ամենից վատն է՝ տաճիկ զինւորները այդ բանը շատ լաւ գիտեն: Նոքա շատ լաւ զգում են իւրեանց ստորութիւնը ռուսաց զինւորների համեմատու-

Թեամբ և ոչ մի յոյս չունին, որ Ռուսաստանի հետ պատահած պատերազմի ժամանակ կարող են յաղթող դուրս գալ, որովհետև ամեն անգամ պատերազմ ունենալով այդ հարևանի հետ, չնայած շատ անգամ իւրեանց թւական գերազանցութեանը, վերջ ի վերջոյ յաղթուել են: Նոյա զգացմունքը, որ միանգամայն համաձայն է մահմեդականութեան դէպի ճակատագիրը ունեցած հաւատին, կարելի էր այսպէս որոշել. «ինչ կարող է մեզ օգնել պատերազմը, վերջ ի վերջոյ ռուսները էլի կ'յաղթեն»: Այլա՜հ այդպէս է վճռել: Նոյա միակ յոյսը եւրոպական դաշնադրութեան վրայ է, սպասում են, որ մի ծոնր պատերազմի ժամանակ նորա Տաճկաստանին օգնութեան կ'հասնեն:

Չնայած այդ պակասութեանց՝ թւի կողմից էլ տաճկական կանոնաւոր զօրքի յափը տէրութեան ասիական մասում շատ անշան է: Սահմանի ամբողջ տարածութեան վրայ սկսած Արարատից մինչև Կարաօրգան, այն է մօտ 250 քիլոմետր տարածութեան վրայ, ամբողջ զօրքի թիւը հազիւ է 2000 զինուորի հասնում, որոնց հանդէպ ռուսաց կողմից առնուազն հինգ անգամ աւելի է, որոնք բացի այդ, իրանց ետեւում ունեն Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի զօրքերը: Զինուորների թւի քչութիւնը նկատելի է նաև հարաւային նահանգներում, այն է վանի, Բիթլիսի, մինչև անգամ Երզրումի նահանգներում, որոնք իւրեանց ահագին տարածութիւններով ունեն միայն մի քանի հազար զինուոր: Այդպիսի պայմանների մեջ ուղղակի զարմանալի է, որ Տաճկաստանի 2 1/2 միլիոն հայերը իրանց ինքնավարութիւն ձեռք բերելու ձգտման մէջ յաջողութիւն չեն ունենում, որովհետև չի կարելի ընդունել, որ մի բուռն տաճկական զօրքը կարող է լաւ կազմակերպուած ապստամբութիւնը ընկճել: Միայն հայերի սնապարծութիւնը և անժաճկապահութիւնն է պատճառ, որոնք չեն կարողանում նման ծրագրերը ծածուկ պահել և միւս կողմից էլ յեղափոխական ընկերութեանց լաւ չմտածած և անպատրաստ կարգադրութիւններն են օգնում տէրութեան, որը մինչև օրս հայերի անբաւականութիւնից դեռ իւր անգործութիւնը չէ կորցրել: Զօրքերի թւի պակասութիւնն է դարձեալ պատճառը, որ տէրու-

Թիւնը չի կտրողանում՝ քրդերի կողմից Հայաստանում կատարուած աւազակութիւնների և կեղեքումների առաջն առնել: Եթէ վարչութիւնը մինչև անգամ ցանկանար էլ, անկտրող կգտնուէր քրդերին և մանաւանդ նոցա զօրեղ գլխաւորներին յանցանաց համար պատժել: Նոքա դեռ գոհ պիտի մնան, եթէ սոքա ուրիշ դժուարութիւններ չեն յառաջ բերում: Քրդերը բոլորն էլ տաճիկների երգուեալ թշնամիներն են և միայն քաղաքականութիւնն է նոցա թելադրում տաճիկների հետ այնպէս չվարուել, ինչպէս քրիստոնեաների հետ: Հէնց այդ է պատճառը, որ տէրութիւնը նոցա ազատ է թողնում վարուելու հայերի հետ ինչպէս իրանք են ցանկանում: Նոքա զգուշանում են տաճիկների դէմ բռնութիւններ գործ դնելուց և արտաքուստ էլ նոցա հետ լաւ յարաբերութեան մէջ են: Ինչ որ այստեղ ասացի, այդ վերաբերում է Թափառական քրդերին, որոնք ժամանակ առ ժամանակ վերադասում են ազնիւ աւազակային գործին նուիրուել: Այն քրդերը, որոնք զիւղերում են ապրում և երկրագործ են, անհաւեմատ անվտանգ են և խաղաղ, այն աստիճանի որ երբեմն սոքա էլ են ենթարկւում իւրեանց Թափառական եղբայրների կողմից կողոպտման և ճնշման: Հայերի անգաղար զանգատները քրդերի բարբարոսութիւնների մասին, որոնք շատ անգամ արձագանք են գտնում եւրոպական, մանաւանդ անգլիական թերթերի մէջ և լրդել են, որ մեծ տէրութիւնները բարեկամաբար յիշեցնեն Տաճկաստանին, թէ ժամանակ է իրագործելու այն բարեփոխութիւնները, որ Տաճկաց կառավարութիւնը խստապահ է հայերին բոլոր ազգերի առաջ Բերլինի վեհաժողովում և վերջապէս նոյն իսկ տէրութեան թուլութիւնը քրդերի անկարգութիւնների հանդէպ, որոնց առաջը զէնքի ոյժով չէր կտրող առնել, գրգեցին բայձր Գրանը լուրջ կերպով մտածել այնպիսի միջոցներ ձեռք առնել, որով հնարաւոր կլինէր այդ ազազակող անտանելի վիճակը, թէ ոչ բոլորովին փոխել, գոնէ առնուազն մեղմայնել: Հորցը աւելի խիստ կերպարանք ստացաւ, երբ ամերիքական քարոզչական ընկերութեան բժիշկ Ռայնոլդը, որ 20 տարուց աւելի գործում էր Հայաստանում իբրեւ բժիշկ և ամեն տեղ քաջ ծանօթ և սիրուած էր,

օր ցերեկով յարձակման ենթարկուեց Մուսաբէկից, որը քրդական բէկ էր և տէրութեան մէջ ցած պաշտօնեայ, և ծանրը կերպով վիրաւորուեց և կոլոպտուեց: Այդ անցքը այն ժամանակուս՝ բաւական շփոթութիւն պատճառեց, դեսպանութիւնը պահանջում էր խիստ պատիժ և երբ սկսուեց քննութիւնը մի առ մի երևան եկան Մուսաբէկի բոլոր անիրաւ գործերը, որոնք ժամանակին նկարագրուեցին նաև եւրոպական մեծ թերթերում և Վուռը երկար տատանելուց և հակառակելուց յետոյ վճռեց նրան աքսորել Մեկքայ ուր, ինչպէս վկայում են, բարձրաձայնունդ աւաղակը՝ բարեհաճում է հիանալի կեանք անցկացնել: Բայց թող անսիրտները չմոռնան, որ Մուսաբէկը իւր չարագործութիւններով մի առանձին աւել բան է ներկայացնում իւր ցեղակիցների մէջ: Այն խեղճը այն էր արել՝ ինչ որ անում են միւս բոլոր քուրդ բէկերը, սկզբից ի վեր արել են և դեռ երկար ժամանակ կշտ ունակեն անել և ըստ այդմ Մուսաբէկն էլ պիտի անպատիժ մնար, քանի որ նա դարևոր կատարուած սովորութեամբ է վարուել:

Ինչպէս է պատահում մի օր սուլթանի խորհրդատուներից խորամանկ մէկը յղահում է մի ինքնուրոյն միաջ, այն է եկէք քրդերին զինւորական կրթութիւն տալով աստիճանաբար վարժենք նոցա քաղաքակիրթ մարդիկ դառնալու, որպէս զի այդպիսով մոռանան, մեղմացնեն իւրեանց բարբարոս բնավորութիւնը, ձեռք վերցնեն աւաղակութիւնից, մանգասպանութիւնից, աւարառութիւնից: Այդ ծրագիրը վաթիշահին նրանով առաւել դուր եկաւ, որ այդ ճանապարհով թէ առաջի նպատակին կհասնէր և թէ միևնոյն ժամանակ Ասիայում իւր զօրքի թիւը կմեծանար, որովհետև քրդերը մինչև այդ ժամանակը հայերի պէս զինւորական ծառայութիւնից միանգամայն ազատ լինելով, կսկսէին ծառայել սուլթանի, բացի այդ գաղափարի իրագործումը շատ հեշտ և արժանազին թւաց, ուստի սուլթանը առանց երկար մտածելու համաձայնեց: Բաւական էր միայն քրդերից պէտքականներին զինւոր անուանել, նոցա բէկերին և իշխաններին աստիճանի բարձրութեան համաձայն զինւորական կոչումներ տալ:

Եւրոպական զօրքի հին և ամենահին ղէնքերը և շորերը՝ որոնք իսկապէս բանի պէտք չեն, նոցա մէջ բաժանել, իսկ մնացած բաները թողնել ժամանակի կրթիչ ազդեցութեանը և այն զինուորական ոգուն, որ պիտի մօնի նրանց մէջ այն գեղեցիկ իրեւէնների հետ միասին: Առանձին կարիք չկայ նախագծեալ ծրագրով ի մի հաւաքած 120000 - ից մինչև 150000 զօրքի կրթութեան մասին մտածել, այդ բաները պիտի թողնել նոցա առաջնորդներին, սփռա բազմիցս յարձակմանց ժամանակ ցոյց են տուել, որ գիտեն օգտուել մի տեղի ռազմագիտական դիրքից և հանգամանքներից: Բնական է որ հասարակ քուրդը ռոճիկ չպիտի ստանայ, նա պիտի ինքը հոգայ իւր և իւր ձիու համար, իսկ նոցա բէկերը պիտի ստանային բացի մի ձեռք գեղեցիկ համազգեստից նաև «բաւական առատ» վարձատրութիւն, որպէս զի այդ բանով աւելի հետաքրքրուեն: Առանձին հպարտութեամբ պատմել են ինձ քուրդ բէկերը այն ոլորմածութեան մասին, որ նոցա ցոյց է տուել սուլթանը՝ մուշիբի ձեռքով նոցա աստիճան աւելով, գեղեցիկ շորեր և ամական չորս լիրայ ռոճիկ (90 ֆրանկ), որ ի հարկէ նոցա կարծիքով շատ մեծ էր:

Մուշիբը, որի ձեռքի տակ գտնուում էին բազմաթիւ զինւորական բժիշկների, կարգադրում է, որ զինւորական ծառայութեան համար պէտքական ճանաչուած քրդերը ի մի ժողովուրդ են իբրև խմբեր, գնդեր, զօրաբաժիններ և որպէս զի կռիւներից և նախանձից ազատ լինի, այնպէս էր անում, որ մի բէկի ստորոգրեալները առանձին գունդ կազմեն, կամ գոնէ հարեւան տեղերի մարդիկը ի մի էր հաւաքում և նրանց վրայ կարգում համեմատաբար ուժեղ բէկին աւելի բարձր աստիճան տալիս՝ թոյլին ստոր: Ապա նա տալիս էր այդ նոր ընտրուած փաշաներին, գլխաւորներին ճանապարհին իրանց հետ վերցնելու մի շարք գեղեցիկ կանոններ, որով թելադրում է նոցա ջանասիրութեամբ վարժուել, քայլել ևն. և ըստ կարելոյն շատ անգամ ծանուցում տալ կամ մուշիբին կամ նահանգի վալիին և որ ամենից գլխաւորն է, նրանց յանձնուեց իւրեանց գաւառի կարգապահութեան և հանգստութեան հսկողութիւնը: Եւ ահա այդ եղանակով աւազակային խմբերի

ներկայացուցիչները դարձան տէրութեան մարմիններ և մի և նոյն
 ժամանակ մեծ յարմարութիւն են տալիս վալիին, տեղը եկած ժա-
 մանակ մի անախորժ գէպք պատահելիս, նոցա իբրև մեղաւոր ներ-
 կայացնելու և ահա այդ եղանակաւ քրդերի իշխանները առն ար-
 ձակուեցին իբրև տէրութեան «զինւորներ» և նրա ապահովութեան
 ներկայացուցիչներ: Մուշիրը մի քանի ամիսներէից ի վեր զբաղուած էր
 այդ քրդական հեծելազօրքի գնդերը կազմակերպելու և հիւսիսա-
 յին Հայաստանում ճանապարհորդում էր մէկ քրդի բէկի մօ-
 տից միւսի մօտ գնալով, որովհետև միայն նրա անձնա-
 կան ներկայութեանը և համոզելու ընդունակութեանը պէտք է
 վերագրել, որ կարելի եղաւ բէկերին գրաւել այդ ծրագրի համար
 և հետաքրքրել նաև գլուխ բերելու: Որովհետև չէր կարող պատա-
 հել, որ քրդերի հպարտ բէկերը լսելով մուշիրի հրամանը՝ այն է
 ներկայ լինել այս ինչ ժամանակում, այս ինչ տեղում, հեշտու-
 թեամբ կլսէին այդ հրամանները, ինչպէս իրաւամբ մի քանի տե-
 դեր էլ չնայած կառավարութեան առաջարկած ամեն տեսակ
 խաղաղ միջոցներին, չեն համաձայնուել ընդունելու զինւորական
 ծառայութիւնը և որպէս զի գրանից աղաւ լինին, լաւ էին հա-
 մարել գաղթել կամ Ռուսաստան, կամ Պարսկաստան: Մինչե-
 իմ դարձը, այն է Հոկտեմբերի վերջերը, ինչպէս առիթ ունեցայ
 տեսնելու, այդ մուշիրը դեռ շարունակ ճանապարհորդում էր
 երբեմն նա լինում էր Պարսկաստանի սահմանի մօտ Բաշկալա-
 յում, երբեմն Միլազկերտում և Գնեշում, վաճի լճի հարաւա-
 յին մասում: Նա կարող էր Քուրդիստանի հէնց մենակ այդ մա-
 սում քրդական ժողովրդից 50000-ից մինչև 60000 ձիաւորներ
 հաւաքել եթէ հաւաքելու լինէր 20-ից մինչև 60 տարեկան հա-
 սակ ունեցողներին (ես երբեմն տեսել եմ միանգամայն ճերմակ
 մազեր ունեցող քուրդ ձիաւորներ) հարաւային մասը մինչև Գիար-
 բֆիր, ուր քրդական բնակութիւնը աւելի խիտ է կարող էր նրան
 տուած լինել 90000-ից մինչև 100000 զօրք, այնպէս որ, եթէ
 այդ գաղափարը իրագործուէր, տաճիկների ասիական զօրքի թի-
 ւը անուամբ 150,000-ով կաւելանար: Բայց ի՞նչ իրական օգուտ
 կայ տէրութեան համար այդ բարբարոս հրոսակների ղէնք կրե-

լուց: Նոցա պատերազմական արժանաւորութեանց համար ոչ մի փորձ չունինք, յամենայն դէպս սխալ կլինէր, եթէ ինկատի առնելով Կ. Պօլսում բանակող ընտրեալ քուրդ գնդերի արտաքին տեսքը և ընդունակութիւնները, որոնց ըստ երևոյթին քաջ տեսքը և կրակոտ աչքերը թելագորում են՝ տաճիկներին՝ նոցա յաճախ ներկայացնելու այն էլ առանձին հպարտութեամբ, եւրոպացիներին, մի որ և է ծանրակշիռ եզրակացութեան գալ ասիական հրոսակների վերաբերմամբ: Որովհետեւ հազիւ թէ կարելի լինի ընդունել, որ նոքա կարող կլինին եւրոպական կանոնաւոր զօրքին դէմ կանգնել, բայց նոքա կարող են փոքրիկ յարձակողական պատերազմում մեծ դեր կատարել և կարճ ժամանակում իբրեւ կողոպտիչներ և աւերիչներ սարսափի առարկայ դառնալ ոչ միայն թշնամու երկրի համար, այլ առաւել իւրեանց երկրի համար: Թէեւ այս ուղղութեամբ էլ դեռ ևս ապացոյցներ չունինք, բայց ես արդէն առիթ եմ ունեցել այլ կերպ տեսնելու քրդերի մէջ այն քաղաքակրթութեան հետեւանքը, որը պիտի ծագէր նախկին յիշած կարգադրութիւններից, և իմ տեսածը կարող է զարհուրելի հետեւանք ունենալ ամբողջ երկրի, մանաւանդ քրիստոնեայ ժողովրդի համար, որովհետեւ այդ տեսակ յանգուզն փորձի հետեւանքը նախապէս չէ կշռուել: Որովհետեւ եթէ մինչեւ օրս քրդերը փոքրիկ խմբերով յարձակում էին գիւղերի վրայ և կողոպտում էին հիմնովին, այդ վարմունքը միանգամայն օրէնքի հակառակ էր համարուում, գիւղացին իրաւունք ունէր գանգատ տալու, փոխարինութիւն և օգնութիւն պահանջել: Եւ եթէ վաղին չիմանալն էր դնում, երբ լսում էր գանգատներ, վնասի պահանջներ և հրամաններ ամենքին լաւ ծանօթ և շատ անգամ իւրեան հետ մտերիմ բարեկամական կապերով միացած քուրդ աւազակին պատժելու համար, այնուամենայնիւ կարող էր ժողովրդի բոլորքի ձայնը միանգամ էլ եւրոպական կոնսուլների միջոցաւ մինչեւ Կ. Պօլիս, եւրոպական դեսպաններին հասցնել և զրգել նոցա, որ տէրութեանը ստիպեն քննել գործը, որը այնքան անհաճոյ և անդուրեկան է Բարձր Դրանը, ինչքան քուրդ բէկերին:

Այժմ այդ բանը փոխուել է, տէրութիւնը այլ ևս կարիք չու-

նի այդ անասակ անախորժ ընդհարումներ ունենալ, որովհետև
 միանգամայն առել է քրդերի օրինազանց վարմունքի առաջը:
 Իսկ դրա ժողխարէն աւելի հիմնաւոր սկզբանց վրայ է դրած գիւ-
 ղացու, մանաւանդ հայ գիւղացու արեան ծծելը, որովհետև այդ
 կատարուելու է օրէնքի հովանաւորութեան տակ, հետեւապէս
 աւելի խաղաղ, կանոնաւոր և լիակատար եղանակաւ: Քրդերը
 ամենից առաջ հիմնովին կերպով իւրացրել են տաճկաց օրէնքի
 այն պարագրաֆները, որոնց հիման վրայ գիւղացիները պարտա-
 կան են շրջակայող զինուորականներին հիւրնկալել, պահել, խնա-
 մել և դրանից նոքա օգուտում են ամենաընդարձակ չափով: Եթէ
 առաջ աշխատանքից փախչող թափառականները այն բոլորը, ինչ
 որ չէ ստացուում կենդանապահութիւնից, անկանոն կերպով, օ-
 րէնքի հակառակ մանում էին քրիստոնեաների գիւղերը իւրեանց
 սղգային քրդա՛յան հագուստներով և իբրև իշխաններ հրամաններ
 էին տալիս և իւրացնում էին իւրեանց ցանկացածը գիւղացինե-
 րի ստացուածքից, այժմ այդ բոլորը նոքա անում են աչքի առաջ ու-
 նենալով երկրի սպահովութիւնը և կարգապահութիւնը, իւրեանց
 բէկերի առաջնորդութեամբ, մեծ և փոքր խմբերով տաճկական
 զօրքի համազգեստով մի տեղից միւս տեղ թափառելով: Պարզ է,
 որ նոքա այժմ օրէնքով կստիպեն գիւղացիներին տալ այն, ինչ
 որ նոքա առաջ առնում էին օրէնքին հակառակ: Եւ այդպէս կա-
 րելի է ամեն օր տեսնել, թէ ինչպէս քրդերի խմբերը բէկերի
 առաջնորդութեամբ՝ համազգեստներով զարգարուած մի գիւղից
 միւսն են գնում, ստիպում են գիւղացիներին իրանց մի առժա-
 մանակ ամենափայլուն կերպով խնամել և ապա անցնում են ու-
 րիշ տեղ և այդ պատճառաւ իւրեանց երկրի տէր կարծելով,
 իբրև պարսններ առաջուանից աւելի են խոյս տալիս աշխատան-
 քից: Եւ այժմ «քաղաքակրթուած» քրդերը աւելի քիչ են վա-
 խենում օրէնքից և տեսնելով գեղեցիկ ձիեր, սիրուն թամ-
 բեր, զէնքեր ևն, վերցնում են առանց նոյն իսկ տիրոջից հարց-
 նելու: Բայց վայ եկել տարել է այն գիւղացուն, որ կյանդգնի
 «կայսերական տաճկական» զինուորին բնակարան չտալ, նա կնկա-
 տուի իբրև օրէնքը ոտի տակ տուող և խիստ կպատժուի: Թէ

ինչ հետեանքներ կառաջացնեն այդ զարհուրելի հանգամանքները և թէ կիրորոնի պէս մզուած հայ ժողովուրդը ինչ միջոցի կղիմի դժուար չէ նախատեսել, մանաւանդ որ Տաճկաստանը վախենալով երկրի ամայանալուց չի թոյլ տալիս ճնշուած ժողովրդին դէպի ուրիշ տեղ գաղթելով մի կերպ ազատուել:

Ք.

(Վ Ե Ր Զ).

